

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇԱԲԱԹ, 23 ՅՈՒՆԻՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Դ Ի Ի Ա Ն Ը

Նորընտիր Գաւառային Երևոփոխանական ժողովը իր առաջին նիստը ըրաւ ի ներկայութեան բոլոր անդամոց և դիւանը կազմեց հետեւեալ կերպով :

Տ. Արթին պէյ Րէիզեան, ատենապետ.

Տ. Արմենակ Կամսարական, փոխ-ատենապետ.

Տ. Միհրան Տամատեան, ատենադպիր.

Տ. Գառնիկ Չպուրճեան, փոխ-ատենադպիր.

Տ. Լևոն Պէրպէրեան հրաժարական մատուցած ըլլալով, Ընտրողական ժողովը ըստ օրինի, իրեն յաջորդ կարգեց, համեմատականի ցանկէն առաւելագոյնի թիւը ստացող, Տ. Տիգրան Կամսարական, որ ամէն կողմէ եղած ըստիպմանց վրայ հաճեցաւ ընդունիլ իր պաշտօնը :

ԴԱՍՍԱՂԻՔ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆ

Պողոսեան վարժարանի հոգաբարձութիւնը ներկայացնող Դիւանաւոր Տ. Աստուր պէյ Շէրիտճեան,

վերջին վայրկեանին, զարմանալի պայծառասնութեամբ մը, նախագգալով թէ ամավերջի քննութեանց առթիւ հասարակութեան աչքին առջև պիտի պարզուի դպրոցին, ամօթալի վիճակը, քննութիւնները սիսելէ քանի մը օր առաջ կծիկը կը գնէ ու կը փախչի Չուրիցերիա, ուր կը գտնուի այժմ :

Կ'ըսուի թէ դպրոցին անմխիթար տնօրէնը՝ Տ. Ամբատ Բիւրատ, դատ պիտի բանայ յիշեալին զէմ, առարկելով որ իր փախուստին առթիւ աշակերտները այնպիսի սաստիկ ջղային յուզման մը ենթարկուած են որ յանկարծ մոռցած են մէկ տարուան միջոցին իրենց սորվածները և պատճառ եղած են քննութեանց անյաջողութեան :

ԾԵՆԾԻ ԽՆԴԻՐԸ

Սահմանադրութեան յաղթանակը, Գաւառային Երեսփոխանական Ժողովի ընտրութիւնը, տաքերը, Տ. Աստուր պէյ Շէրիտճեանի փախուստը, Քէօմիւրճի Պատուելիին իրարանցումը, փաշային մեկուսացումը, Տ. Բարսեղ Օհանեանի հեռագրական նուէրները, Տումային անյաջողութիւնը, Սպանիոյ Ալֆօնս թագաւորին զէմ եղած ոճրափորձութիւնը և Աքապայի խնդիրը կ'երևայ որ այնքա՞ն գրգռած են Պողոսեան վարժարանի տնօրէն Տ. Սէբատ Բիւրատի ջիւղերը որ բոլորովին կորսնցուցած է մինչև հիմակ ցոյց տուած պայծառ հանգարտութիւնը :

Դժբախտաբար իր բնաւորութեան ստացած այս նոր կերպարանափոխութենէն զպրոցի ա-

շակերտները կամ մանաւանդ աշակերտուհիներն են որ կը տուժեն :

Իբրև որինակ առաջ բերենք թղթակցի մը հետեւեալ տողերը .

„1906 յունիս 14-15 հինգշաբթի և ուրբաթ օր տեղոյս Պողոսեան վարժարանի մէջ քանակածում մը տեղի ունեցած է հոն պաշտօնավարող տնօրէն Սմբատ Բիւրատի և իտալացի վարժուհի օր. Էօժէնի Պալիտարոյի կողմէ: Ծեծը կատարուած է աղջիկներու վրայ և անոնցմէ մէկուն երեսը վիրաւորուած է քանակի մը հարուածէն:“

„Տ. Սմբատ Բիւրատ կ'երեւայ որ մասնաւոր դիտումով մը կ'արգիլէ աշակերտուհիներէն ոմանց քննութեանց առթիւ իրենց դասերը սորվելու և կը պահանջէ որ ձեռագործով միայն պարապին: Աշակերտուհիները կը փորձեն ընդդիմանալ, ասոր վրայ Սմբատ Բիւրատ բարկաճայթ կը մտնէ աղջկանց դասարանը, կը յարձակի անոնց վրայ և կը սկսի մէկիկ մէկիկ ապտակել, առանց խորհելու թէ այդ փափուկ էակները կրնան հարուածներուն տակ դող ելլել և վտանգաւոր հիւանդութեան մը ենթարկուիլ: Իտալացի վարժուհին, տեսնելով այդ ընդհանրական ծեծը և առանց որոշապէս պատճառը գիտնալու, ինքն ալ քանակ մը կ'առնէ և մէկ քանի աղջիկներու զարնելով, անոնցմէ մէկուն երեսը կը վիրաւորէ:“

Այս տողերը չպիտի հրատարակէինք եթէ իրողութեան ճշտութիւնը ստուգած չըլլայինք մեր կողմէ :

Կը լսենք թէ երկուշաբթի օր, քննութեանց միջոցին, երեք չորս ազգայիններ ներկայացած են Գեր. Առաջնորդ Հօր և բողոքած են այդ անարդարանալի և վայրագ արարքին դէմ :

Գեր. Առաջնորդ Հայրը նկատողութեան առնելով խնդիրը, խորհուրդ տուած է իրեն ներկայացողներուն որ իրենց բողոքը գրաւոր կերպով մատուցանեն Քաղաքական Ժողովին :

ՄԻՋԱԴԵՊ ՄԸ

Երկուշաբթի օր, Պօզոսեան վարժարանի մէջ, բարձրագոյն կարգի ազգային պատմութեան քննութեան ատեն.

Դասախօս՝ Մ. Նորատունկեան, ինքնակոչ քննիչ՝ Բէօմիւրճի Պատուելի :

Մ. Նորատունկեան.--Պարո՞ն, նախ սորվեցէ՛ք, յետոյ յիտողութիւն ըրէ՛ք :

Բէօմիւրճի Պատուելի.--Պարո՞ն, սխալ է ձեր սորվեցուցածը :

Մ. Նորատունկեան.--Պարո՞ն, ես ձեզի տասր տարի դաս կուտամ :

Բէօմիւրճի Պատուելի.--Պարո՞ն, ես ձեզի քսան տարի դաս կուտամ...

Տասը, քսան ալ՝ երեսուն., տուէ՛ք երեսուն տարի իրարու դաս և վստահ եղիք որ երկուքդ ալ երեսուն տարի ետքը նոր բան մը սորված չպիտի ըլլաք իրարմէ :

Տուէ՛ք և փորձեցէք :

ՅԱՌԱՋՐԻԿԱՅ ՆԻՍՏՐ

Տ. Արթին պէյ Բէրզեան, Ալեքսանդրիոյ Գաւառային Երեսփոխանական Ժողովի ատենապետը, Տ. Գառնիկ Չպոլքճեան՝ փոխ-ատենապիրը, Տ. Արմենակ Կամսարական փոխ-ատենապետը և անդամներէն Տ. Տրգրան Կամսարական, Վսեմ. Միհրան Խան Գա. ֆա. յան, Տ. Յ. Մութաֆեանց, Լեւ. քիչ օրէն, ամառուան եղանակը անցնելու համար Եւրոպա մտնելուն, Երեսփոխանական Ժողովի յառաջիկայ նիստը հաւանօրէն տեղի պիտի ունենայ, Չուիցերիոյ մէջ, Տափօս Լիրան գագաթը:

ԶԱՆԶԻՊԱՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

(Շար. նախորդ թիւէն)

Այս քաղաքութիւնները տալէ վերջ, այժմ ձեզի պատմեմ թէ ի՞նչ փորձանքներ եկան Պապուլայի և իր ընկերներու հողաթափներուն գլխին:

Տեղացի Բաֆրները, որոնք ինչպէս գիտեք, տարիներէ ի վեր պայքար կը մղէին Սասամաճայի գործադրութեան համար, տեսնելով որ հակառակ իրենց ջանքերուն Ափրում Բալա, բնաւ հողաթափները վար առնելու միտք չունի, այլ ընդհակառակը ոսկիէ գամեր ապսպրած է, զանոնք ա՛լ աւելի հաստատ կերպով կոտտան պատին վրայ գամելու համար, մեծ բազմութեամբ կը հաւաքուին կոտտան բակը և կը հրբաւիրեն իրենց հողե. օր պետը որ Տատրականա կը կոչուի, որպէսզի օրինական արարողութիւններով հողաթափները վար առնէ: Տատրականա կ'ընդդիմանայ. ասոր վրայ, զինքը համոզելու համար, ըստ Բաֆր տե-

ղական սովորութեան ձեռքով քանի մը հարուած կ'իջկցենն զլիւին: Տատրակունա բաւական համողիչ չք գտնար այդ հարուածները, ուստի պէտք կ'ըլլայ, միշտ ըստ Քաֆր սովորութեան, աւելի զօրաւոր փաստեր մէջտեղ դնել:

Տատրականան կը պակկեցնեն զետին ու գաւազանի յիսուն հարուած կուտան ուղբերուն.

--Կամաց կամաց ձեր պահանջին օրինաւորութեանը պիտի համոզուիմ, կ'ըսէ Քաֆրներու կրօնական պետը, բայց շիտակն ըսելու համար ձեր փաստերը պէտք եղածին չափ զօրաւոր չեն:

Այն ատեն Սասամամայի պաշտպանները թերեւին կը սոթթեն, Տատրականան ծառի մը կը կապեն եւ փառաւոր տիտոյ մը կը քաշեն ժամու մը չափ:

-- Հա', զաւակներս, կը գոչէ հոգեոր զլուխը, աեսա՞ք մի, հիմա համողուեցայ, կատարելապէս արգարադի է ձեր դատը ու անմիջապէս Սասամամայի գործադրութեան պիտի ձեռնարկեմ, երթայք ի խաղաղութիւն:

--Նախ հողաթափները վար առնենք, կը պռայ ամբողջ:

--Ս.ոէ՛ք հապա, առէ՛ք, կը գոչէ Տատրականա բոլորովին համոզուած շեշտով մը:

Եւ ահա՛ հանդիսաւոր կերպով հողաթափները վար առնուելով կը զրկուին իրենց տէրերուն:

Քաֆր բարեկամի մը զարմանքս յայտնեցի Տատրականան համոզելու համար ի գործ դրուած Քաֆր տեղական գրութեան մասին:

--Կը զարմանամ որ կը զարմանաք, պատասխանեց, երբ միենոյն ձեւը զուք ալ ի գործ կը դնէք, սա տարբերութեամբ որ զուք մէկը համոզելու համար

օրերով անոր գլուխը ներսէն կ'ուռեցնէք, մինչդեռ
մենք նոյն արդիւնքին կը հասնինք կէս ժամու մէջ,
մարդուն գլուխը դուրսէն ուժեղնելով :

Մարդը իրաւունք ունէր. սնմիջապէս ընդունելի
այդ ճշմարտութիւնը, առանց սպասելու որ Քաֆր
սովորութեան համեմատ զիս համոզէ:

Գալ անգամ ուրիշ մամրամասնութիւններ:

ԲՍԼ ԹՌՕՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

Չորեքշաբթի առտու, Պօղոսեան վարժարանի
վեցերորդ կարգի պատմութեան դասին ատեն, Դասա-
խօս Տ. Մ. Նորատունկեան:

--Տիրա՛ն, Երեսփոխանական Ժողովը քանի՞ անգա-
մէ կը բաղկանայ.

--Տասնըութը, միւսիւ:

--Լաւ, Սերգի՛ս, քանի՞ տարեկան ըլլալու է Ե-
րեսփոխան ընտրուելու համար:

--Երեսուն տարեկան, միւսիւ:

--Ա.Ֆէրիմ. Տրդատ, Երեսփոխանական Ժողովը ի՞նչ
կ'ընէ.

--Քաղաքական Ժողով կ'ընտրէ, միւսիւ:

--Կեցցե՛ս, Մարկոս դուն ի՞նչ ես... համոզումով:

--Սահմանադրական եմ, միւսիւ:

--Շատ աղէկ, աղաս. Լեոն, Խնամակալութիւնը
աղէ՞կ բան է:

--Չէ, միւսիւ, գէշ բան է:

--Պրալօ՛:

Եւ Տ. Մ. Նորատունկեան ներկաներուն կը նա-
ջի, կարծես ըսել ուզելով.

--Տեսէ՛ք, ի՞նչ սահմանադրասէր դասատու մըն
եմ... Սմբատ Բիւրատին չեմ նմանիր ։

Կ'ըսուի թէ խոհեմ ու խորամանկ Տ. Նորատուն-
կեանը սահմանադրական գիտելիքներու դասաւան-
դութիւնը անհրաժեշտ նկատեր է այն օրէն ի վեր
ուր Տ. Յ. Շնորհքեան և Տ. Մ. Տամատեան երեսփո-
խան ընտրուած են ։

Ասկէց լաւագոյն կերպով չէր կրնար ինքզինքը
յանձնարարել ։

ՄԵՐ ՏԱՌԵՐԸ

Ուշիմ ու սրատես ընթերցողները անշուշտ նըշ-
մարեցին թէ քանի մը շաբաթէ ի վեր «Ազատ Խօսք»
բողոքովին նոր և մաքուր տառերով կը տպագրուի ։
Եթէ հարկ տեսանք մեր կողմէն ալ շեշտել այս իրո-
ղութիւնը, պատճառը այն է որ ուղեցիկնք ցոյց տալ
մեր ընթերցողներուն թէ «Ազատ Խօսք» որ և է զո-
հողութեան առջև չպիտի ընկրկի, միշտ գէպի կատա-
րելութիւն դիմելու համար ։

Բաց աստի մեր թերթին առաջին թիւերը ան-
ջատ, երկու մասի բաժնուած հրապարակ ելան, ինչ
որ հարեանցի դատաստան ընողներու համար կրնար
համարուիլ երկպառակութեան, անհամաձայնութեան
նոյնիսկ՝ քաջաբար ըսենք. կուսակցական բաժանումի
արդիւնք մը, Արդ, երկու շաբաթէ ի վեր, ինչպէս
անշուշտ ուշիմ ու սրատես ընթերցողները նշմարե-
ցին, այդ երկու մասերը եղբայրական կաթոգին զըր-
կընդխառնումով մը իրարու մէջ հիւսուած են. կար-
ծես խորհրդանշան մը ըլլալու համար այն Հայկական
Ընդհանուր Միութիւններուն որոնք համաձայրակ հի-

ւանդութեան մը պէս սկսած են տարածուիլ ամէն կողմ :

Այս երկու իրողութիւնները ներկայացնելով մեր ընթերցող բաժանորդներու խորին ուշադրութեան, կը խնդրենք որ հաճին ընդ հուպ մեզի հասցնել իրենց բաժնեգիրնր, Բնականաբար այս խօսքերը պատիւ ունինք ուզղելու ա՛յն բաժանորդներուն որոնք ցաւալի մոռացկոտութեամբ մը մինչև այսօր թերացած են իրենց բաժանորդական պարտականութեանց մէջ :

Կանխաւ մեր ներողամտութիւնը :

ՈՒՐԻՇ ՄԻՋԱԴԷՊ ՄԸ

Դաւնանք նորէն Պօղոսեան վարժարանի քննութեանց, Հինգերորդ կարգ, թուարանութեան քննութիւն, դասարիս՝ Տ. Սմբատ Բիւրատ :

Տիգրան Երկաթի եռամեծ կենսագիրը հարցում մը կ'ուղղէ դասարանին ամենաքաջալուազոյն աշակերտին, հարցում մը որ ճիշտ ու ճիշտ չենք յիշեր, բայց սըւոր նման բան մըն մըն է :

--Երեսփոխանական ժողովը 18 անդամէ կը բաղկանայ, երեքը հրաժարած են, քանի՞ անդամ կը մնայ :

Ամենաքաջալուազոյնը լուծիւն մը կը պահէ զոր չենք վարանիք սփինքսեան որակելու :

Փիւնիկեցին հարցումը կը կրկնէ, պատասխանը աշակերտին բերանը դնելու կերպով մը :

Նոյն սկի լուծիւնը :

Պ. Տնօրէնը դարձեալ հարցումը կը կրկնէ, յաւելեալ, պարզաբանեալ, ճոխացեալ մանրամասնութիւններով :

Ներկաներէն մին, կարծենք Տ. Հ. Մանուկեան կը

բողոքէ այդ կերպ հարցումին դէմ:

Տ. Սմբատ Բիւրատ կը բողոքէ ընդմիջման դէմ:

Տ. Մանաւեան կը լուսկանայ, Տ. Բիւրատ կը զայրանայ, ամենաքաջալուարդոյնը առիթէն օգտուելով տեղը կը նստի և քննութիւնը կը դադրի:

Տ. Սմբատ Բիւրատ օրահէն կ'ելլայ ու կ'երթայ վեր, Գեր. Առաջնորդին քով:

--Հայր սուրբ քննութիւնս կը խանգարեն կոր, ըսելով լալագին:

Նոյն միջոցին դասարան կը մտնէ Տ. Ե. Սրմաքէչխանլեան և Տ. Մանաւեանի քով երթալով:

--Դուրս ելէ՛ք, պարօն, կը գոչէ:

--Դուք դուրս ելէ՛ք, կը պատասխանէ միւսը:

--Ո՛չ, դուք ելէ՛ք:

--Ո՛չ, դուք ելէ՛ք:

Եւ որովհետեւ «դուք ելէ՛ք»ին վերջը չէր ի գար, երկու ընդդիմախօսները հայհոյանքներու պերճախօսութեան կը դիմեն և Տ. Ե. Սրմաքէչխանլեանի հայհոյանքները աւելի զօրաւոր ըլլալով, ծանրապէս կը վիրաւորեն Տ. Մանաւեանը:

Վիրաւորը, ձեռքը սրտին վրայ, կը վազէ վեր, Գեր. Առաջնորդին քով, ուր կը գանուէր արդէն Տ. Սմբատ Բիւրատ:

--Վիրաւորեցին զիս, կը գոչէ Տ. Մանաւեան, ձեռքը սրտին վրայ հեալով:

--Շո՛ւտ, բժիշկ մը, կ'աղաղակէ խեղճ առաջնորդը գող ելած:

--Ո՛չ, հայր սուրբ, արժանապատուութիւնս է վիրաւորուողը, կը բացատրէ Տ. Մանաւեան:

--Տէ՛ր ողորմեա՛, տէ՛ր ողորմեա՛, տէ՛ր ողորմեա՛, կ'ըսէ Առաջնորդը և երեքը միասին դասարան կ'իջնեն:

Հո՛ն, Գեթ. Առաջնորդը հայրաքար կը հաշտեցնէ
ամէնքը, պարտ ու պատշաճ յետս կոչումներ տեղի
կ'ունենան. արժանապատուութիւնները կը վերապատ-
ուին, խեղճ թիրիմացութիւնը կը հռչակուի զլիսա-
որ պատասխանատուն ամէն շարեաց ու խնդիրը կը
կապուի անոյշ տեղի գերանին:

Ամավերջի քննութիւնը Պօղոսեան վարժարանի...
լաւագոյն չէ՞ ըսել՝ ամավերջի խեղճատակութիւնը:

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Շաքէ խում-
բի վիճակահանութիւնը տեղի ունենալով 292 թիւը
չաճած է: Ինչպէս յայտնի է վիճակահանութեան գրք-
ուած էր ծանօթ յեղափոխական գործիչ հանգուցեալ
Քրիստափոր Միքայէլեանի մեծազիր պատկերը: Շա-
հող թիւին տէրը կրնայ մինչև ամիս մը գիմել Տ. Գը-
րիգոր Նազարէթեանի աշխատանոցը, Ալեքսանդրիս,
Սասմպուլ փողոց, պատկերը ստանալու համար:

Շ Ի Ր Ա Կ

Ինչպէս ծանուցած էինք, «Շիրակ» ամսաթիւրթի
երկրորդ տարւոյն առաջին թիւը հրապարակելու ճոխ
պարունակութեամբ:

Ահաւաստիկ բովանդակութիւնը.

Գանկի մը չուրջը

Արիւնին փոխարէնը

Կրուի երթ

Հայրենագիտութեան կարիքը

Հողվրտիքը

Միջազգային

Ամսեակը

Ա. Արփիարեան,

Տիրան Գեղէկեան

Դ. Վարուժան

Մ. Նաթանեան

Հրազդան

+++

Ա. Ա.

«Շիրակ» Արևքսանդրիայէն Գահիրէ փոխադրուած է. երկրորդ տարուան շրջանը կը սկսի 1906 յունիսէն. խմբագրութիւնը տարուան սը պայմանաժամով յանձնուած է Արփիար Արփիստեանի, իսկ հիմնադիր-տնօրէնները կը մնան Վահան Թէքէեան և Միքայէլ Կիրճեան: Տարեկան բաժնեկին, Եգիպտոս՝ 50 դր. ողջ, Արտասահման՝ 12 ֆր. Ամերիկա 2 թաւէր, Ռուսաստան՝ 4 ռուպլի:

Հասցէ. Սմբագրութիւն «Շիրակ»ի, պուսթ բօսթալ թիւ 37, Գահիրէ (Եգիպտոս):

ՀԱՆԴԷՍԸ

Սահմանադրութիւնը տօնելու խանդավառութիւնը որչա՛փ բուռն, ափսո՛ս, այնչափ ալ կարճատև եղաւ. Տ. Գ. Չպուքճեանի քսան ոսկին, արամադրելի թռամվայի վակոնները, հայկական նուագախումբը, երգերը, ճառախօսութիւնները, պարերն ու ճաշօտեղանները, վնետիկեան լապտերներն ու գոյնզգոյն զրօշակները, կարգադիր մասնախումբը, նորընտիր Լրեսիօխաններու նուէրները և աջակցութիւնը, Չափպիի զբօսավայրը, վերջապէս բոլոր այն խառնիճաղանճ շինուածանիւթերը որոնցմով պիտի կառուցուէր հանդէսին շէնքը, ամբողջութեամբ կամ խալամովին ջուրը ինկան յանկարծ:

Ինչո՞ւ համար:

Պարզապէս անոր համար որ գործին մէջ շատ մարդիկ մտան, ամէն սք ծրագիր մը առաջարկեց, զազափար մը յղացաւ, կարծիք մը յայտնեց, ուրկէ անհամաձայնութիւններ, վիրաւորանքներ, անհասկացողութիւններ առաջ եկան: Աւ ետանզը, ոգերութիւնը կամաց կամաց մարեցաւ, ումանք յուսահատ ետ քաշ-

ունկան, ուրիշներ քէն ըրին և վերջապէս Սահմանա-
դրութեան հանդէսը կատարելու խորհուրդը վիժեցաւ,
անգամ մըն ալ ապացուցանելով թէ տասը խօսողի
տեղ մէկ գործող մը աւելի օգտակար է ծրագիր մը ք
գլուխ հանելու համար:

ԱՐՏԱՔՍՈՒՄ

Երկու տիրտնոչակ պարոններ, Տ. Թիւրիմացու-
ժիւն և Տ. Անհամաձայնութիւնն, որոնք վերջերս հե-
ռացած կ'երեւային Վոզային շրջանակէն, յանկարծ մէջ-
տեղ ելին ևն չորեքշաբթի, ցերեկէն ետքը ժամը Ծին
միջոցները և չենք գիտէր ի՞նչ խաբէական ու չիլ մի-
ջոցով մը սպրդէր ևն Երեսփոխանական Ժողովին մէջ,
որ յատկապէս գումարուած էր Քաղաքական Ժողովը
բնարելու համար: Այդ պարոնները, ինչպէս միշտ, այս
անգամ ալ իրենց ներկայութեամբ յաջողներ ևն երես-
փոխաններուն մտքերը պղտորել և նոյնիսկ պատճառ
ըլլալ հրաժարականներու շարքի մը, որուն հետեանքը
կրնար ըլլար նոյնիսկ նորընտիր Երեսփոխանութեան
չուժումը, նոր քուէարկութեան մը հարկը, նոր Ընտ-
րողական Ժողովի մը պէտքը, նոր ցանկերու, նոր
ընտրելեաց, նոր կոչերու հրատարակումը, վերջապէս
վերսկսումը ամբողջ սահմանադրական պայքարին:

Բարեբաղդարար այդ տխուր պարոնները, հակա-
ռակ իրենց ծպտումին, չուտով դիմակազերծ կ'ըլլան
և ուրբաթ գիշեր Երեսփոխանական Ժողովը կրկին
նիստ գումարելով իր ծոցէն դուրս կը վանէ զիրենք
որպէսզի ուրիշ ստան չփորձեն իրենց եզեռնական ա-
րարքները:

Մազթենք որ այդ վարպետորդի և շարամիտ պա-

րոնները նոր միջոց մը : չգտնեն կրկին իրենց քիթը
խօթելու համար պատկառելի ժողովին դռնէն ներս :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Հսկառակ մեր քիչ մը վերի մաղթանքին, կ'երևայ
որ անկարելի եղած է Երևափոխանական ժողովին
մէջ համաձայնութեան մը յանգիլ և կ'ըսուի թէ հե-
տեակ նորընտիր երևափոխանները իրենց հրաժարա-
կանը մատուցած են .

Վսեմ. Արթին պէյ Բէրզեան

» Մ. Խան Գալֆայեան

Տիար Ա. Կամսարական

» Տ. Կամսարական

» Ս. Աբրահամեան

» Գ. Իրէքեան

» Լ. Մկրտիչեան

» Տ. Յ. Մութաֆեան

» Ա. Մուղալեան

» Պ. Օհանեան

Այս ապշեցուցիչ լուրը վերջին րոպէին մեզ հա-
սած ըլլալով ժամանակ չունեցանք պաշտօնական աղ-
բիւրէ մը զայն ստուգելու : Զերմապէս կը փախաքինք
որ սխալ եղած ըլլար կամ վերջին ժամուն բարերար
միջամտութեամբ մը խնդիրը կարգադրուէր, հրաժա-
րականներու ետ անուկելով :

Թէ ի՞նչ են այն պատճառները որոնք յառաջ բե-
րած են այս հրաժարականները կամ տնհամաձայնու-
թիւնները, ատոնց մասին յաջորդ թիւով պիտի խօ-
սինք, առ այժմ բաւ կը համարենք այսչափը :

Խնդիրը այնքա՞ն ծանրակշիռ և միանգամայն ցա-
ւալի է որ չենք ուզեր մեր կողմէն դատաստան մը
ընել առանց սրոջ տեղեկութեանց :

ՆԱՄԱՆԱՏՈՒՓ

Առ Տ. Գ. Ա. Թանթա... Մեր աշխատակիցներէն
չուրս որ և է անձի գրութիւն չենք հրատարակեր,
նամանաւանդ երբ գէշ գրուած ըլլան:

Առ Տ. Ե. Կ. Աստ... Ձեր սիրային բանաստեղծու-
թիւնը լաւ է որ ուղղակի ակնարկեալի հասցէին զը-
կէք, առանց փորձելու «Ազատ Խօսք»ի էջերէն անցը-
նելու գայն: Այդ աեսակ միջնորդութիւններ չենք ընէր:

«ԱԶԱՏ ԽՕՍՔ» ՁԵՌՔԻ ԿԸ ՎԱՃԱՌՈՒՄ

Ալեքսանդրիա՝ Տ. Ե. Ղազիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ. Թեղալեանի խանութը:

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կօլտըն Բէտչ-
քի քով և «Լուսարեւ» թերթի ցրութիւն մօտ:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կըր-
կին զինով:

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՆՈ

ՆՈՐ ՎԻՔՏՈՐԻԱ ՕՍԷԼ Ազերաանդրիոյ Մօտ
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՁ ԲԱՅՈՒՍԾ Հալթ թիւ 2

Առաջին կարգի օթէլ, մասնաւորապէս չինուած,
այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով:
Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր
ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեբա-
րական լոյս: ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆ: Թելեֆօն թիւ 370: Հե-
ռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թոամվա-
յով տասը վայրկեան Ալեքսանդրիայէն:

Ս. Ֆ. ՌէՉԻԿ, ՏՆՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօն-
եաներու և զինուորականներու համար: Բոլոր սեն-
եակները ծովուն վրայ կը նային:

Մ Ե Ծ Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ո Ց

ՓՈՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Գ. Ն Ա Ջ Ա Ր Է Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Յ Ա Յ Յ Ի Չ

Մասային եւ Տէրախ երկարդ, Վարչութեանց. եւն. եւն.

15 RUE STAMBUL 15

ALEXANDRIE, Egypte

Այս աշխատանոցին մէջ կը պատրաստուին Պրզինձէ և Նիբէլէ զուռի Բլաքներ, Բաուչուէ, Պզինձէ, Պողպատէ կնիքներ, արծաթէ և ոսկիէ մծնօկրամներ, Թամփօններ, ևն. Ջինկօկրաֆիի և Կալվանօրլասթիի վերարերևալ գործեր:

Տպարանական ամէն տեսակ գործեր հայ և օտար լեզուներով: Հարսանեկան հրաւիրագիրներ, այցաքարտներ, նամակազուխներ, ստացագիրներ, հասցեքարտներ, մահազգներ, հայերէն պրոչիւրներ, զիրքեր ևն:

Մասնաւոր խնամք ճաշակի և մաքրութեան: Չափաւոր գին:

Այս աշխատանոցը ջերմապէս կը յանձնարարենք Աղերսանդրիոյ, Գահիրէի և բոլոր եգիպտահայ ազգայնոց, վստահեցնելով թէ հոն եղած բոլոր յանձնարարութիւնները ամենամեծ խնամքով կը կատարուին և զո՛հ կը ձգեն ամէնէն զժուարահաճ ճաշակները:

Օտար գործատուներու զիմելէ առաջ հաճեցէք անգամ մը այցելել սոյն աշխատանոցը:

Պատասխանատու-Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փորգր. Գ. ՆԱՋԱՐԷԹԵԱՆ, Ալեքսանդրիա.